| 22. | համայնքի տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոնին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար՝ մեկ քառակուսի մետրի համար (ուժի մեջ է մտնում 01.10.2022 թվականից): | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ապրիլի 2022 թվականի N 25-Ն

## 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 8-րդ, 10-րդ, 13-րդ, 14-րդ և 16-րդ հոդվածների, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Սահմանել Աբովյան համայնքում (այսուհետ՝ համայնք) տեղական վճարների տեսակները, դրանց դրույքաչափերը և արտոնությունները 2022 թվականի համար՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 14 000 (տասնչորս հազար) դրամ.

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 14 000 (տասնչորս հազար) դրամ.

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 14 000 (տասնչորս հազար) դրամ.

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ.

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 14 000 (տասնչորս հազար) դրամ.

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1 000 (հազար) դրամ.

7) ջրմուղ-կոյուղու համար, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, ջրամատակարարման և ջրահեռացման համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ Գեղաշեն գյուղում բնակելի տնտեսության յուրաքանչյուր ծորակի համար՝ 500 (հինգ հարյուր) դրամ, իսկ արտադրական տնտեսության յուրաքանչյուր ծորակի համար 1 000 (հազար) դրամ,

8) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մեկ քառակուսի մետրի համար փոխհատուցման վճար՝ ամսական 10 (տասը) դրամ.

9) համայնքապետարանի աշխատակազմի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար փոխհատուցման վճար՝ 1 000 (հազար) դրամ.

10) համայնքում աղբահանության դիմաց գանձվող տեղական վճարի դրույքաչափերը և արտոնությունները՝ համաձայն հավելված 1-ի.

11) շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման համար համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող թույլտվության համար գանձվող տեղական վճարի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի.

12) համայնքային ենթակայության մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումար և արտոնություններ՝ համաձայն հավելված 3-ի.

13) «Աբովյանի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումար և արտոնություններ՝ համաձայն հավելված 4-ի.

14) «Աբովյանի գեղարվեստի դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումար և արտոնություններ՝ համաձայն հավելված 5-ի.

15) «Գագիկ Ծառուկյանի անվան Աբովյանի սպորտի և մշակույթի համալիր կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Աբովյանի շախմատի դպրոց» ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարի նկատմամբ կիրառել զրոյական դրույքաչափ:

16) Գեղաշենի «Մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումար և արտոնություններ՝ համաձայն հավելված 6-ի.

17) «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակութային կենտրոն» հիմնարկի ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումար և արտոնություններ՝ համաձայն հավելված 7-ի.

18) «Կամարիսի մշակույթի տուն» մշակութային հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումար և արտոնություններ՝ համաձայն հավելված 8-ի.

19) Համայնքի բնակավայրերն սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1 000 (հազար) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ սույն որոշման 1-ին կետի 10-րդ և 12-18-րդ ենթակետերը տարածվում են 2022 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ -19

| | | |
|---|---|---|
| Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ | Դ. ԶԱՐՈՅԱՆ | Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ | Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ | Ա. ՄԵՂՐՅԱՆ |
| Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ | Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ | Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ |
| Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ | Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Ա. ՔՈՍԱԿՅԱՆ |
| Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ | Ն. ՀԱԿՈԲՅԱՆ | Ն. ՄԵԼԻՔՅԱՆ |
| Տ. ԳԵՂԱՄՅԱՆ | Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | Գ. ՕՀԻՊՅԱՆ |
| | Գ. ԳԱԼՍՏՅԱՆ | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. ապրիլի 15
ք. Աբովյան

Հավելված 1
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 15 - ի
N 25 -Ն որոշման

**ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

| N | Աղբահանության վճարի տեսակները | Աբովյան քաղաք | Կաթնաղբյուր գյուղ | Վերին Պտղնի գյուղ | Գեղաշեն գյուղ | Պտղնի գյուղ | Կամարիս գյուղ | Արամուս գյուղ | Առինջ գյուղ | Գետարգել գյուղ | Մայակովսկի գյուղ | Բալահովիտ գյուղ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | **Բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում կոշտ կենցաղային թափոնների համար աղբահանության վճարը՝** | | | | | | | | | | | |
| 1) | Ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով, ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար | 250 (երկու հարյուր հիսուն) | 150 (հարյուր հիսուն) | 150 (հարյուր հիսուն) | 150 (հարյուր հիսուն) | 100 (հարյուր) | 150 (հարյուր հիսուն) | 150 (հարյուր հիսուն) | 200 (երկու հարյուր) | 150 (հարյուր հիսուն) | 150 (հարյուր հիսուն) | 100 (հարյուր) |
| 2) | Ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար | 20 (քսան) | 20 (քսան) | 20 (քսան) | 10 (տաս) | 20 (քսան) | 20 (քսան) | 15 (տասնհինգ) | 10 (տաս) | 20 (քսան) | 5 դրամ (դրամ) | 20 (քսան) |
| 2. | **Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և (կամ) շինություններում աղբահանության վճարը՝ ըստ շինության ընդհանուր մակերեսի** | | | | | | | | | | | |
| 1) | Առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների մատուցման շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) |

| N | Աղբահանության վճարի տեսակները | Արովյան քաղաք | Կաթնաղբյուր գյուղ | Վերին Պտղնի գյուղ | Գեղաշեն գյուղ | Պտղնի գյուղ | Կամարիս գյուղ | Արամուս գյուղ | Առինջ գյուղ | Գետարգել գյուղ | Մայակովսկի գյուղ | Բալահովիտ գյուղ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2) | Հյուրանոցային տնտեսության օբյեկտների, տրանսպորտի բոլոր տիպերի կայանների (ավտոկայանների, երկաթուղային կայարանների), հանգստյան տների, բազաների ու ճամբարների, սպորտի համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 20 (քսան) | 20 (քսան) | 20 (քսան) | 20 (քսան) | 20 (քսան) | 20 (քսան) | 20 (քսան) | 20 (քսան) | 20 (քսան) | 20 (քսան) | 20 (քսան) |
| 3) | Վարչակառավարչական, ֆինանսական, կապի, ինչպես նաև առողջապահության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 15 (տասնհինգ) | 15 (տասնհինգ) | 15 (տասնհինգ) | 15 (տասնհինգ) | 15 (տասնհինգ) | 15 (տասնհինգ) | 15 (տասնհինգ) | 15 (տասնհինգ) | 15 (տասնհինգ) | 15 (տասնհինգ) | 15 (տասնհինգ) |
| 4) | Գիտական, կրթական և ուսումնական նշանակության, սոցիալական ապահովության, մշակույթի, արվեստի, կրոնական, պաշտամունքային, քաղաքացիական պաշտպանության համար նախատեսված շենքերի և շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 3 (երեք) | 3 (երեք) | 3 (երեք) | 3 (երեք) | 3 (երեք) | 3 (երեք) | 3 (երեք) | 3 (երեք) | 3 (երեք) | 3 (երեք) | 3 (երեք) |
| 5) | Արտադրական՝ արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների մասով (այդ թվում՝ ավտոկայանատեղի)՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 5 (հինգ) | 5 (հինգ) | 5 (հինգ) | 5 (հինգ) | 5 (հինգ) | 5 (հինգ) | 5 (հինգ) | 5 (հինգ) | 5 (հինգ) | 5 (հինգ) | 5 (հինգ) |

| N | Աղբահանության վճարի տեսակները | Արովյան քաղաք | Կաթնաղբյուր գյուղ | Վերին Պտղնի գյուղ | Գեղաշեն գյուղ | Պտղնի գյուղ | Կամարիս գյուղ | Արամուս գյուղ | Առինջ գյուղ | Գետարգել գյուղ | Մայակովսկի գյուղ | Բալահովիտ գյուղ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6) | Ջորանոցների համար | | | | 8 (ութ) | | | | | | | 8 (ութ) |
| 3. | Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերի մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար՝ | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) | 50 (հիսուն) |
| 4. | Ոչ կենցաղային աղբի համար, ինչպես նաև ոչ բնակելի տարածքների վերաբերյալ սույն որոշման 2-րդ կետի 1-6-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի հետ անհամաձայնության դեպքում աղբահանության վճարը՝ | | | | | | | | | | | |
| 1) | Ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ | 3 000 (երեք հազար) | 3 000 (երեք հազար) | 3 000 (երեք հազար) | 3 000 (երեք հազար) | 3 000 (երեք հազար) | 3 000 (երեք հազար) | 3 000 (երեք հազար) | 3 000 (երեք հազար) | 3 000 (երեք հազար) | 3 000 (երեք հազար) | 3 000 (երեք հազար) |
| 2) | Ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) | 10 000 (տասը հազար) |

5. Շինություններում, որտեղ իրականացվում է մեկից ավելի առանձնացված տնտեսական գործունեություն, աղբահանության վճարը հաշվարկվում է յուրաքանչյուր հատվածի համար՝ ըստ տվյալ հատվածում իրականացվող գործունեության տեսակի, համաձայն սույն հավելվածի 2-րդ կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափերի, եթե աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին՝ կցելով նշված հատվածների մակերեսների նշումով սխեման, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն հավելվածի 2-րդ կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափով:

6. Շինություններում (այդ թվում՝ առանձնացված տնտեսական գործունեության համար նախատեսված շինությունների առանձին հատվածներում), որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շինությունում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին, իսկ համայնքի ղեկավարին չտեղեկացնելու դեպքում հաշվարկվում է սույն հավելվածի 2-րդ կետի 1-5-րդ ենթակետերով սահմանված դրույքաչափով:

7. Շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, կենցաղային ծառայությունների մատուցման վայրերում, որտեղ որևէ գործունեություն մշտապես կամ ժամանակավորապես չի իրականացվում, աղբահանության վճար չի հաշվարկվում, եթե շենքերից և շինություններից դուրս գտնվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների, ծառայությունների մատուցման վայրերում մշտապես կամ ժամանակավորապես որևէ գործունեություն չիրականացնելու վերաբերյալ աղբահանության վճար վճարելու պարտավորություն ունեցող անձը դրա մասին գրավոր տեղեկացնում է համայնքի ղեկավարին:

8. Ոչ բնակելի նպատակային նշանակության շենքի և (կամ) շինության սեփականատերը անհամաձայնության մասին գրավոր ներկայացնում է համայնքի ղեկավարին՝ աղբահանության ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

9. Սույն հավելվածի 1-ին կետով սահմանված աղբահանության վճարի դրույքաչափի 50%-ի չափով նվազեցման արտոնությունից օգտվում են հետևյալ սոցիալական խմբերը՝

1) հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձիք, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) անձանց ընտանիքը (ամուսինը, ծնողները, ինչպես նաև ընտանիքի՝ կերակրողին կորցնելու դեպքում զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող անդամները).

2) Հայրենական մեծ պատերազմի վետերանները և արցախյան պատերազմի մասնակիցները:

10. Սույն հավելվածի 9-րդ կետով նախատեսված արտոնությունը կիրառվում է աղբահանության վճարի դրույքաչափի մնացած 50 %-ը վճարելու պայմանով:

Հավելված 2
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 15 - ի
N 25 -Ն որոշման

**ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ԽՈՇՈՐ ԵԶՐԱՉԱՓԻ ԱՂԲԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

| N | Թույլտվության վճարի տեսակը | Դրույքաչափերը (դրամ) |
|---|---|---|
| 1. | Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի՝ ըստ ծավալի մեկ խորանարդ մետրի հավաքման և տեղափոխման թույլտվության համար | 600 ( վեց հարյուր ) |
| 2. | Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի՝ ըստ զանգվածի մեկ տոննայի հավաքման և տեղափոխման թույլտվության համար | 2 000 ( երկու հազար ) |

Հավելված 3
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 15 - ի
N 25 -Ն որոշման

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

1. «Աբովյանի N 2 մանկապարտեզ», «Աբովյանի N 3 միջհամայնքային մանկապարտեզ», «Աբովյանի N 4 մանկապարտեզ, «Աբովյանի N 5 մանկապարտեզ», «Աբովյանի N 6 մանկապարտեզ», «Աբովյանի N 7 մանկապարտեզ», «Աբովյանի N 9 մանկապարտեզ», «Աբովյանի N 10 մանկապարտեզ», «Աբովյանի N 12 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ մանկապարտեզներ) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2022 թվականի համար սահմանել ամսական 8 000 (ութ հազար) դրամ:
2. Մայակովսկու «Զեփյուռ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2022 թվականի համար սահմանել ամսական 7 000 (յոթ հազար) դրամ:
3. Կամարիսի «Կակաչ» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն, Գեղաշենի «Հեքիաթ մանկապարտեզ» և «Վերին Պտղնի համայնքի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2022 թվականի համար սահմանել ամսական 5 000 (հինգ հազար) դրամ:
4. Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում չունեցող երեխաների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-3 կետերում սահմանված գումարի կրկնակիի չափով:
5. 2020 թվականի Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած Արցախի Հանրապետության տարածքներից Աբովյան համայնք տեղափոխված ընտանիքների երեխաների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-3 կետերում նշված գումարի չափով:
6. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող (անկախ հաշվառման վայրից) անձանց երեխաների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2022 թվականի համար սահմանել սույն հավելվածի 1-3 կետերում սահմանված գումարի չափով:
7.Մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի 100 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝
1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ, մարտական գործողությունների ժամանակ, զոհված կամ հաշմանդամ դարձած անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից:
2) երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ եթե ունեն Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում:
8. Մանկապարտեզների ծառայություններից օգտվող՝ Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում ունեցող երեխաների համար, համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի 50 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝
1) միակողմանի ծնողազուրկ (մահացած ծնող ունեցող) ունեցող երեխաների համար,
2) 1-ին և (կամ) 2-րդ կարգի հաշմանդամ ծնող ունեցող երեխաների համար,
3) երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող և ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքի երեխաների համար,
4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից,
5) նույն կազմակերպություն հաճախող 3 և ավելի երեխաների համար,
6) հաշմանդամ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:
9. Մանկապարտեզների ծառայություններից օգտվողների համար կիրառվում է համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարների նվազեցման միայն մեկ արտոնություն:
10. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի համար կիրառելու 50-ից 100 տոկոսի չափով նվազեցման արտոնություն՝ ավագանու կողմից սահմանված կարգին, պայմաններին և չափորոշիչներին համապատասխան:

Հավելված 4
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 15 - ի
N 25 -Ն որոշման

**«ԱԲՈՎՅԱՆԻ ԶԱՐԵՀ ՍԱՀԱԿՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

1.«Աբովյանի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաս-տիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցվող ծառայու-թյունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2021 թվականի սեպտեմբերի 01-ից նոր ընդունվող երեխաների համար սահմանել 4 000 (չորս հազար) դրամ՝ բոլոր բաժինների համար, իսկ արդեն ընդունված և հաճախող երեխաների համար սահմանել՝

| N | Բաժիններ | Մասնակի փոխհատուցման գումարի ամսական չափը (դրամ) |
|---|---|---|
| 1 | Դաշնամուր | 4 000 ( չորս հազար ) |
| 2 | Վոկալ | 3 000 ( երեք հազար ) |
| 3 | Լարային նվագարաններ (ջութակ, թավջութակ, կիթառ ) | 2 000 ( երկու հազար ) |
| 4 | Ազգային նվագարաններ (քանոն, շվի, դուդուկ, թառ, ուդ, դհոլ) | 2 000 ( երկու հազար ) |
| 5 | Փողային նվագարաններ | 2 000 ( երկու հազար ) |

2. Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում չունեցող երեխաների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի կրկնակիի չափով:

3. 2020 թվականի Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած Արցախի Հանրապետության տարածքներից Աբովյան համայնք տեղափոխված ընտանիքների երեխաների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում նշված գումարի չափով:

4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող (անկախ հաշվառման վայրից) անձանց երեխաների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2022 թվականի համար սահմանել սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի չափով:

5. Ազգային, լարային և փողային նվագարանների բաժիններում պետության կողմից նվիրաբերության (սուբվենցիայի) հատկացման պայմանագրով նախատեսված քանակով լավագույն սովորողներն ազատվում են ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի վճարումից:

6. Կազմակերպության ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 100 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ, մարտական գործողությունների ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից:

2) երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ եթե ունեն Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում:

7. Կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում ունեցող երեխաների համար, համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի 50 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝

1) միակողմանի ծնողազուրկ երեխաների համար,

2) 1-ին և (կամ) 2-րդ կարգի հաշմանդամ ծնող ունեցող երեխաների համար,

3) չորս և ավելի անչափահաս երեխա ունեցող և ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքի երեխաների համար,

4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից:

5) նույն կազմակերպություն հաճախող 3 և ավելի երեխաների համար,

6) հաշմանդամ երեխաների համար, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար

8. Կազմակերպության ծառայություններից օգտվողների համար կիրառվում է համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարների նվազեցման միայն մեկ արտոնություն:

10. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի համար կիրառելու 50-ից 100 տոկոսի չափով նվազեցման արտոնություն՝ ավագանու կողմից սահմանված կարգին, պայմաններին և չափորոշիչներին համապատասխան:

Հավելված 5
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 15 - ի
N 25 -Ն որոշման

## «ԱԲՈՎՅԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

**1.**«Աբովյանի գեղարվեստի դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2021 թվականի սեպտեմբերի 01-ից նոր ընդունված երեխաների համար սահմանել 4 000 (չորս հազար) դրամ՝ բոլոր բաժինների համար, իսկ արդեն ընդունված և հաճախող երեխաների համար սահմանել 3 000 (երեք հազար) դրամ:

2. Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում չունեցող երեխաների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի կրկնակիի չափով:

3. 2020 թվականի Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած Արցախի Հանրապետության տարածքներից Աբովյան համայնք տեղափոխված ընտանիքների երեխաների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում նշված գումարի չափով:

4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող (անկախ հաշվառման վայրից) անձանց երեխաների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2022 թվականի համար սահմանել սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի չափով:

5. Կազմակերպության ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 100 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից:

2) երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ եթե ունեն Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում:

6. Կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում ունեցող երեխաների համար, համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի 50 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝

1) միակողմանի ծնողազուրկ երեխաների համար,

2) 1-ին և (կամ) 2-րդ կարգի հաշմանդամ ծնող ունեցող երեխաների համար,

3) չորս և ավելի անչափահաս երեխա ունեցող և ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքի երեխաների համար,

4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից,

5) նույն կազմակերպություն հաճախող 3 և ավելի երեխաների համար,

6) հաշմանդամ երեխաների համար, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:

7. Կազմակերպության ծառայություններից օգտվողների համար կիրառվում է համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարների նվազեցման միայն մեկ արտոնություն:

8. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի համար կիրառելու 50-ից 100 տոկոսի չափով նվազեցման արտոնություն՝ ավագանու կողմից սահմանված կարգին, պայմաններին և չափորոշիչներին համապատասխան:

Հավելված 6
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 15 - ի
N 25 -Ն որոշման

# ԳԵՂԱՇԵՆԻ «ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1. Գեղաշենի «Մշակույթի տուն» հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2022 թվականի համար սահմանել 3 000 (երեք հազար) դրամ:
2. Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում չունեցող երեխաների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի կրկնակիի չափով:
3. 2020 թվականի Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած Արցախի Հանրապետության տարածքներից Աբովյան համայնք տեղափոխված ընտանիքների երեխաների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում նշված գումարի չափով:
4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող (անկախ հաշվառման վայրից) անձանց երեխաների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2022 թվականի համար սահմանել սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի չափով:
5. Կազմակերպության ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 100 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝
1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից:
2) երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ եթե ունեն Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում :
6. Կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում ունեցող երեխաների համար, համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի 50 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝
1) միակողմանի ծնողազուրկ (մահացած ծնող ունեցող) երեխաների համար,
2) 1-ին և (կամ) 2-րդ կարգի հաշմանդամ ծնող ունեցող երեխաների համար,
3) չորս և ավելի անչափահաս երեխա ունեցող և ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքի երեխաների համար,
4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից:
5) նույն կազմակերպություն հաճախող 3 և ավելի երեխաների համար,
6) հաշմանդամ երեխաների համար, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:
7. Կազմակերպության ծառայություններից օգտվողների համար կիրառվում է համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարների նվազեցման միայն մեկ արտոնություն:
8. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի համար կիրառելու 50-ից 100 տոկոսի չափով նվազեցման արտոնություն՝ ավագանու կողմից սահմանված կարգին, պայմաններին և չափորոշիչներին համապատասխան:

Հավելված 7
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 15 - ի
N 25 -Ն որոշման

# «ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՍԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱՐԿԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

1. «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի մարզամշակութային կենտրոն» հիմնարկի (այսուհետ՝ հիմնարկ) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2022 թվականի համար սահմանել՝

| N | Բաժիններ | Մասնակի փոխհատուցման գումարի ամսական չափը (դրամ) |
|---|---|---|
| 1 | 1-3 դասարան (երաժշտական բաժին) | 1 500 (հազար հինգ հարյուր) |
| 2 | 4-7 դասարան (երաժշտական բաժին) | 2 000 (երկու հազար) |
| 3 | Վոկալ | 1 000 (հազար) |
| 4 | Պար | 4 000 (չորս հազար) |
| 5 | Ֆուտբոլ | 0 (զրո) |
| 6 | Վոլեյբոլ | 0 (զրո) |
| 7 | Ժող. գործիքներ | 0 (զրո) |

2. Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում չունեցող երեխաների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի կրկնակիի չափով:
3. 2020 թվականի Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած Արցախի Հանրապետության տարածքներից Աբովյան համայնք տեղափոխված ընտանիքների երեխաների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում նշված գումարի չափով:
4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող (անկախ հաշվառման վայրից) անձանց երեխաների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2022 թվականի համար սահմանել սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի չափով:
5. Կազմակերպության ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 100 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝
1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից:
2) երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ եթե ունեն Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում:
6. Կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում ունեցող երեխաների համար, համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի 50 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝
1) միակողմանի ծնողազուրկ (մահացած ծնող ունեցող) երեխաների համար,
2) 1-ին և (կամ) 2-րդ կարգի հաշմանդամ ծնող ունեցող երեխաների համար,
3) չորս և ավելի անչափահաս երեխա ունեցող և ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքի երեխաների համար,
4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից:
5) նույն կազմակերպություն հաճախող 3 և ավելի երեխաների համար,
6) հաշմանդամ երեխաների համար, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար:
7. Կազմակերպության ծառայություններից օգտվողների համար կիրառվում է համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարների նվազեցման միայն մեկ արտոնություն:

8. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի համար կիրառելու 50-ից 100 տոկոսի չափով նվազեցման արտոնություն՝ ավագանու կողմից սահմանված կարգին, պայմաններին և չափորոշիչներին համապատասխան:

Հավելված 8
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 15 - ի
N 25 -Ն որոշման

**«ԿԱՄԱՐԻՍԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԳՈՒՄԱՐԻ ԱՄՍԱԿԱՆ ՉԱՓԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

1. «Կամարիսի մշակույթի տուն» մշակութային հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2022 թվականի համար սահմանել՝

| N | Բաժիններ | Մասնակի փոխհատուցման գումարի ամսական չափը (դրամ) |
|---|---|---|
| 1 | Դաշնամուր | 3 000 ( երեք հազար ) |
| 2 | Պար | 3 000 ( երեք հազար ) |
| 3 | Դհոլ | 3 000 ( երեք հազար ) |
| 4 | Շախմատ | 3 000 ( երեք հազար ) |

2. Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում չունեցող երեխաների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի կրկնակիի չափով:
3. 2020 թվականի Արցախյան երկրորդ պատերազմի հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած Արցախի Հանրապետության տարածքներից Աբովյան համայնք տեղափոխված ընտանիքների երեխաների համար համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը սահմանել սույն հավելվածի 1-ին կետում նշված գումարի չափով:
4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող (անկախ հաշվառման վայրից) անձանց երեխաների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի չափը 2022 թվականի համար սահմանել սույն հավելվածի 1-ին կետում սահմանված գումարի չափով:
5. Կազմակերպության ծառայություններից օգտվողների համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 100 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝
1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից:
2) երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ եթե ունեն Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում:
6. Կազմակերպության ծառայություններից օգտվողների համար՝ Աբովյան համայնքում մշտական կամ փաստացի հաշվառում ունեցող երեխաների համար, համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի 50 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել՝
1) միակողմանի ծնողազուրկ (մահացած ծնող ունեցող) երեխաների համար,
2) 1-ին և (կամ) 2-րդ կարգի հաշմանդամ ծնող ունեցող երեխաների համար,
3) չորս և ավելի անչափահաս երեխա ունեցող և ընտանիքի անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքի երեխաների համար,
4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում ծառայող երեք և ավելի անչափահաս երեխա ունեցող անձանց երեխաների համար՝ անկախ հաշվառման վայրից:
5) նույն կազմակերպություն հաճախող 3 և ավելի երեխաների համար,
6) հաշմանդամ երեխաների համար, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար
7. Կազմակերպության ծառայություններից օգտվողների համար կիրառվում է համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարների նվազեցման միայն մեկ արտոնություն:
8. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցման գումարի համար կիրառելու 50-ից 100 տոկոսի չափով նվազեցման արտոնություն՝ ավագանու կողմից սահմանված կարգին, պայմաններին և չափորոշիչներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ու Մ

15 ապրիլի 2022 թվականի N 26-Ն

## 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***

1. Սահմանել Աբովյան համայնքում հասցեների տրամադրման ծառայության վճար՝ 5 000 (հինգ հազար) դրամ:

2. Սահմանել Աբովյան համայնքի վարչական տարածքում փողոցային լուսավորության հենասյուների օգտագործման տրամադրման ծառայության վճար՝ ամսական 300 (երեք հարյուր) դրամ՝ յուրաքանչյուր հենասյան համար 1 լարանցման համար:

3. Սահմանել տաքսիների, միջմարզային, ներմարզային և ներհամայնքային ուղևորափոխադրումներ իրականացնող երթուղային ավտոբուսների և միկրոավտոբուսների համար Աբովյան համայնքի ավտոկանգառներից օգտվելու ծառայության վճար՝ ամսական 3 000 (երեք հազար) դրամ՝ յուրաքանչյուր ավտոմեքենայի համար:

4. Սահմանել «Գագիկ Ծառուկյանի անվան Աբովյանի սպորտի և մշակույթի համալիր կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող ծառայությունների վճարները՝ համաձայն հավելված 1-ի:

5. «Գագիկ Ծառուկյանի անվան Աբովյանի սպորտի և մշակույթի համալիր կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճը և նախասրահը օգտագործման տրամադրելու համար՝ 1 ժամվա վճարը սահմանել 30 000 (երեսուն հազար) դրամ:

6. «Աբովյանի Զարեհ Սահակյանցի անվան երաժշտական դպրոց» արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Աբովյանի երեխաների աջակցության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճը և նախասրահը օգտագործման տրամադրելու համար՝ 1 ժամվա վճարը սահմանել 20 000 (քսան հազար) դրամ:

7. Գեղաշենի «Մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության դահլիճը օգտագործման տրամադրելու համար՝ 1 օրվա վճարը սահմանել 20 000 (քսան հազար) դրամ:

8. «Աբովյանի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից Աբովյան քաղաքի գերեզմանատների պահպանման և սպասարկման ծառայության վճարը յուրաքանչյուր հուղարկավորության համար սահմանել ՝ 15 000 (տասնհինգ հազար) դրամ:

9. Սահմանել «Աբովյանի քաղաքային տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից Աբովյան համայնքի բազմահարկ շենքերի վերելակների սպասարկման և տեխնիկական զննման վճարների չափը՝ համաձայն հավելվածներ 2-ի և 3-ի:

10. «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կողմից ոռոգման ջուր տրամադրելու ծառայության վճարը սահմանել հողամասի 1 քառակուսի մետրի համար՝ սեզոնում 20 (քսան) դրամ:

11. Սահմանել Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման կամ օգտագործման տրամադրման փաստաթղթերի (փաթեթի) կազմման համար ծառայության վճար՝ համաձայն հավելված 4-ի:

12. Սահմանել Աբովյան համայնքի վարչական տարածքում գտնվող անշարժ գույքի գործառական նշանակության փոփոխության ծառայության վճար՝ համաձայն հավելված 5-ի:

13. Սահմանել համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական մեքենաները օգտագործման տրամադրելու վճար՝ համաձայն հավելված 6-ի:

14. Իրավունք վերապահել համայնքի ղեկավարին սույն որոշման 5-8-րդ կետերով սահմանված վճարների համար կիրառելու դրույքաչափի նվազեցման արտոնություն՝ վճարի 50-ից 100 տոկոսի չափով:

15. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19

| | | |
|---|---|---|
| Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ | Դ. ՋԱՐՈՅԱՆ | Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ | Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ | Ա. ՄԵՂՐՅԱՆ |
| Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ | Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ | Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ |
| Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ | Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Ա. ՔՈՍԱԿՅԱՆ |
| Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ | Ն. ՀԱԿՈԲՅԱՆ | Ն. ՄԵԼԻՔՅԱՆ |
| Տ. ԳԵՂԱՄՅԱՆ | Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | Գ. ՕՍԻՊՅԱՆ |
| | Գ. ԳԱԼՍՏՅԱՆ | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. ապրիլի 15
ք. Աբովյան

Հավելված 1
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 15 -ի
N 26-Ն որոշման

**«ԳԱԳԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԲՈՎՅԱՆԻ ՍՊՈՐՏԻ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱԼԻՐ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

| N | Մարզաձևեր | Ծառայության վճարների չափը (դրամ) |
|---|---|---|
| 1. | Լող՝ | |
| 1.1 | 1 ժամ պարապմունքի համար | 1 500 (հազար հինգ հարյուր) |
| 1.2 | 12 ժամ պարապմունքի համար | 15 000 ( տասնհինգ հազար ) |
| 2. | Մարմնամարզություն (12 ժամ պարապմունքի համար) | 8 000 ( ութ հազար ) |
| 3. | Մարզասրահ (12 ժամ պարապմունքի համար) | 6 000 (վեց հազար ) |

Հավելված 2
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 15 -ի
N 26-Ն որոշման

**«ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱՀԱՐԿ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԵԼԱԿՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

| N | Շենքերի հարկերի և բնակարանների թիվը | Ամսական վճարի չափը (դրամ) |
|---|---|---|
| 1. | 6 հարկանի շենք, հարթակում 2 բնակարան | 5 800 ( հինգ հազար ութ հարյուր ) |
| 2. | 6 հարկանի շենք, հարթակում 3 բնակարան | 6 500 ( վեց հազար հինգ հարյուր ) |
| 3. | 9 հարկանի շենք, հարթակում 2 բնակարան | 8 800 ( ութ հազար ութ հարյուր ) |
| 4. | 9 հարկանի շենք, հարթակում 3 բնակարան | 10 120 ( տասը հազար հարյուր քսան ) |
| 5. | 9 հարկանի շենք, հարթակում 4 բնակարան | 11 440 ( տասնմեկ հազար չորս հարյուր քառասուն ) |
| 6. | 14 հարկանի շենք, հարթակում 4 բնակարան | 16 750 ( տասնվեց հազար յոթ հարյուր հիսուն ) |
| 7. | 12 հարկանի շենք, հարթակում 6 բնակարան | 18 640 ( տասնութ հազար վեց հարյուր քառասուն ) |
| 8. | 16 հարկանի շենք, հարթակում 6 բնակարան | 25 450 ( քսանհինգ հազար չորս հարյուր հիսուն ) |

Հավելված 3
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 15 -ի
N 26-Ն որոշման

**«ԱԲՈՎՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱԶՄԱՀԱՐԿ ՇԵՆՔԵՐԻ ՎԵՐԵԼԱԿՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՉԱՓԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

| N | Շենքերի հարկերի թիվը | Տարեկան վճարի չափը (դրամ) |
|---|---|---|
| 1. | 6-9 հարկանի շենքեր | 15 000 ( տասնհինգ հազար ) |
| 2. | 12 հարկանի շենքեր | 20 000 ( քսան հազար ) |
| 3. | 14 հարկանի շենքեր | 23 300 ( քսաներեք հազար երեք հարյուր ) |
| 4. | 16 հարկանի շենքեր | 26 700 ( քսանվեց հազար յոթ հարյուր ) |

Հավելված 4
Աբովյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 15 -ի
N 26-Ն որոշման

**ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ (ՓԱԹԵԹԻ) ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ**
**2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

| Հ/Հ | Վճարի տեսակը | Դրույքաչափը (դրամ) |
|---|---|---|
| **1.** | Օրինականացված ինքնակամ կառույցների օտարման կամ օգտագործման տրամադրման համար | 65 000 ( վաթսունհինգ հազար ) |
| **2.** | Բնակելի կամ ոչ բնակելի տարածքների օտարման և օգտագործման տրամադրման համար | 73 000 ( յոթանասուներեք հազար ) |

Հավելված 5
Արովյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 15 -ի
N 26-Ն որոշման

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

| Հ/Հ | Վճարի տեսակը | Դրույքաչափը (դրամ) |
|---|---|---|
| 1. | **Շինությունների համար՝** | |
| | 1) Ֆիզիկական անձանց համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար | 250 ( երկու հարյուր հիսուն ) |
| | 2) Իրավաբանական անձանց համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար | 250 ( երկու հարյուր հիսուն ) |
| 2. | **Հողամասերի համար՝** | |
| | 1) Ֆիզիկական անձանց համար՝ 5 000 (հինգ հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար | 100 ( հարյուր ) |
| | 2) Իրավաբանական անձանց համար՝ 50 000 (հիսուն հազար) դրամ, գումարած յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի համար | 100 ( հարյուր ) |

Հավելված 6
Արովյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 15 -ի
N 26-Ն որոշման

**ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎՃԱՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ**

| Հ/Հ | Վճարի տեսակը | Դրույքաչափը (դրամ) |
|---|---|---|
| **1.** | **Տրակտորի համար՝** | |
| | 1) Խոտի հակի (տուկ) պրեսավորում, հատ | 100 ( հարյուր ) |
| | 2) Գութան՝ 1000 մետրի համար | 5 000 (հինգ հազար) |
| | 3) Ֆրեզ՝ 1000 մետրի համար | 5 000 (հինգ հազար) |
| | 4) Սրսկիչ (գարնանային սրսկում առանց նյութերի տրամադրման) ՝ 1000 մետրի համար | 1000 ( հազար ) |
| | 4) Սրսկիչ (սանիտարական սրսկում առանց նյութերի տրամադրման) ՝ 1000 մետրի համար | 5 000 (հինգ հազար) |
| **2.** | **Կոմբայնի համար՝** | |
| | 1) Հացահատիկեղենի հավաք՝ 1000 մետրի համար | 2 000 (երկու հազար) |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2022 թվականի N 27-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի, 33-րդ հոդվածի 3-րդ մասի, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ  է՝***

1. Հաստատել Աբովյան համայնքի ղեկավարի բյուջետային ուղերձը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել Աբովյան համայնքի 2022 թվականի բյուջեն՝

1) եկամուտների գծով՝ 3 150 000.0 հազար դրամ.

2) ծախսերի գծով՝ 4 570 651.2 հազար դրամ.

3) դեֆիցիտը (պակասուրդը)՝ 1 420 651.2 հազար դրամ:

3. Աբովյան համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորմանն ուղղել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 1 420 651.2 հազար դրամ:

4. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտներն ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հավելված 2-ի:

5. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հավելված 3-ի:

6. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 4-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը՝ համաձայն հավելված 5-ի:

8. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրները՝ համաձայն հավելված 6-ի:

9. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերն ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հավելված 7-ի:

10. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարել վերաբաշխումներ, որոնց հանրագումարը չպետք է գերազանցի սույն որոշմամբ հաստատված չափաքանակների 15 %-ը:

11. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -19

| | | |
|---|---|---|
| Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ | Դ. ԶԱՐՈՅԱՆ | Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |
| Ռ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ | Ա. ԹԵՆԵՔԵՋՅԱՆ | Ա. ՄԵՂՐՅԱՆ |
| Ա. ԳԱՍՊԱՐՅԱՆ | Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ | Ս. ՍԵԹՐԱԿՅԱՆ |
| Ն. ԶԱՐԳԱՐՅԱՆ | Է. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Ա. ՔՈՍԱԿՅԱՆ |
| Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ | Ն. ՀԱԿՈԲՅԱՆ | Ն. ՄԵԼԻՔՅԱՆ |
| Տ. ԳԵՂԱՄՅԱՆ | Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ | Գ. ՕՍԻՊՅԱՆ |
| | Գ. ԳԱԼՍՏՅԱՆ | |

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԲԱԲԱՅԱՆ**

2022թ. ապրիլի 15
ք. Աբովյան

Հավելված 1
Արովյան համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի 15- ի
N 27-Ն որոշման

# ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

## 1.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

